

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ազգային ագրարային
համալսարանի շրջանավարտների
միավորում»

հասարակական կազմակերպության

համագումարի որոշմամբ

«__» _____ 20 թ.

Նախագահ

Մ. Բադալյան

ՏՊԱԳՐՎԱԾ Է ՉՈՐՍ ՕՐԻՆԱԿԻՑ

ՕՐԻՆԱԿ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Պետական ռեգիստրի գործակալության
կենտրոնական մարմնի կողմից

«__» _____ 20 թ.

Գրանցման №

Վկայականի №

001-2 փոփոխությունը գրանցված է Պետական
ռեգիստրի գործակալության կենտրոնական
մարմնի կողմից

«__» _____ 20 թ.

Պետական ռեգիստրի ղեկավար

Գ. Սարգսյան

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

«Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շրջանավարտների միավորում»

ՀԱՍԱՐԱՐՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա, ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջներ քննարարելու նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորում է:
- 1.2. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:
- 1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
- 1.5. Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպություն, կրճատ՝ «ՀԱԱՀ շրջանավարտների միավորում»: Կազմակերպության ռուսերեն անվանումն է «Объединение выпускников Национального аграрного университета Армении» общественная организация, կրճատ՝ «Объединение выпускников НАУА»: Անգլերեն լրիվ անվանումն է՝ «Association of graduates of the Armenian National Agrarian University», կրճատ՝ «Association of graduates of the ANAU graduates» NGO:
- 1.6. Կազմակերպության գտնվելու վայրն է - ք. Երևան, Տերյան – 74, հեռախոս 58–19-12:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1. Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտների՝ հետագայում Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, ներկայումս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ Համալսարանի) շրջանավարտների համագործակցության և գործողությունների համակարգման միջոցով նպաստել համալսարանի զարգացմանն ու նրա առաքելության արդյունավետ իրականացմանը:

- 2.2. Նպաստել Համալսարանի տեղացի և օտարերկրյա շրջանավարտների փոխադարձ կապերի զարգացմանն ու ամրապնդմանը՝ ստեղծելով համագործակցության համար անհրաժեշտ համապատասխան տվյալների բազա:
- 2.3. Նպաստել Համալսարանի շրջանավարտների աշխատանքային և մասնագիտական առաջխաղացմանը, գիտելիքների կատարելագործմանը:
- 2.4. Աջակցել Համալսարանի արտաքին գիտաարտադրական կապերի և միջազգային համագործակցության զարգացմանը, ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայի, մագիստրների և ասպիրանտների փոխանակման իրականացմանը:
- 2.5. Աջակցել Համալսարանի դիմողների հավաքագրմանը և մասնագիտական կողմնորոշմանը, կրթական ծրագրերի և մասնագիտությունների գովազդին և իմիջի ստեղծմանը:
- 2.6. Աջակցել Համալսարանի շնորհաշատ ուսանողներին, օժանդակել նրանց օգտակար նախաձեռնություններին:
- 2.7. Աջակցել ագրարային գիտության, նոր տեխնոլոգիաների և ագրոբիզնեսի զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում, գյուղատնտեսական մասնագիտությունների վարկի բարձրացմանը, գիտական պարբերականների, ժողովածուների, ուսումնական ձեռնարկների վերլուծականների հրատարակման, գյուղատնտեսական ոլորտին առընչվող գիտաժողովների, սեմինարների, լսումների, քննարկումների, ցուցահանդեսների կազմակերպման, խորհրդատվության միջոցով:
- 2.8. Հետամուտ լինել գյուղատնտեսության և գյուղական տեղանքի զարգացմանը միտված ծրագրերի իրականացմանը, գյուղական բնակավայրերում զբաղվածության խնդրի կարգավորմանը և ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը:
- 2.9. Կրթական, հոգևոր-մշակութային և մարզական կյանքի աշխուժացմամբ նպաստել տաղանդաշատ և շնորհալի երիտասարդների բացահատմանը՝ նրանց ապագան դարձնելով Կազմակերպության հոգածության առարկա:
- 2.10. Հատուկ ուշադրություն դարձնել հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի հիմնախնդիրներին՝ դրանց լուծումներին ծառայեցնելով Կազմակերպության մարդկային, գիտական և կազմակերպական ողջ ռեսուրսները:
- 2.11. Կազմակերպության կարողություններն ուղղորդել առողջ և կենսունակ գյուղական համայնքներ ունենալուն, որպես ռազմավարական կարևորագույն խնդիր և ազգային անվտանգության երաշխիք:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՍԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

- 3.1. Կազմակերպության անդամ կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այն քաղաքացիները, որոնք ավարտել են Հայկական գյուղատնտեսական ակադեմիան և (կամ) Երևանի անասնաբուժական անասնաբուժական ինստիտուտները, ներկայումս՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանը (այսուհետ՝ Համալսարանը) կամ ասպիրանտուրան, աշխատել կամ սովորել են Համալսարանում, համակիր են Կազմակերպության նպատակներին և ցանկություն ունեն մասնակցել նրա գործունեությանը և ընդունում են Կազմակերպության կանոնադրությունը:
- 3.2. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության խորհրդին (այսուհետև՝ խորհուրդ):
- 3.3. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է խորհուրդը:
- 3.4. Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում խորհրդի որոշմամբ:
- 3.5. Կազմակերպության այն անդամը, որը խորհրդի կողմից սահմանված լիներու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, կամ պարբերաբար խախտում է սույն կանոնադրությունը խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝
 - ա) ընտրել և ընտրվել Կազմակերպության բարձրագույն և այլ մարմիններում, ընդ որում, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում կարող է ընտրվել 18 տարին լրացած անձը,
 - բ) Կազմակերպության աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ,
 - գ) սպառիչ տեղեկատվություն ստանալ Կազմակերպության գործունեության մասին,
 - դ) ազատ դուրս գալ Կազմակերպությունից,

- ե) Կազմակերպությունից ստանալ իրավական օգնություն՝ ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը,
 - զ) մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,
 - է) Կազմակերպության նախագահի և Խորհրդի ոչ կանոնադրական գործունեության դեմ բողոքարկել Չամագումարին, կամ դատարան:
- 4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝
- ա) հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,
 - բ) կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,
 - գ) մուծել վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը,
 - դ) բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները,
- 4.3. Կազմակերպության կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Կազմակերպության Չամագումարի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, Կազմակերպության անդամությունից զրկում:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

- 5.1. Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:
- 5.2. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում: Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կարգակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:
- 5.3. Կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝
- ա) տեղեկատվություն տաժել իր գործունեության մասին,
 - բ) հիմնադրել լրատվության միջոցներ,
 - գ) կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր,

- դ) ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- ե) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով,
- զ) օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,
- է) օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել կազմակերպությանը պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք,
- ը) կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ,
- թ) ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով,
- ժ) իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային և ոչ կառավարական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, իր անդամներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությամբ համապատասխան:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Կազմակերպությունը պարտավոր է՝

- ա) ցանկացած ֆիզիկական անձի պահանջով յոթ օրացուցային օրվա ընթացքում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,
- բ) օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,
- գ) իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության Համագումարի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը,

դ) պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Կազմակերպության Համագումարին,

ե) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին,

զ) առանձնացված ստորաբաժանումներում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար,

է) վարել իր անդամների հաշվառումը,

ը) առանց լիազորագրի Կազմակերպությունը ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Կազմակերպության գտնվելու վայրի հասցեի մասին տվյալները:

7. ԿԱԶՄԿԱԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմին՝ Համագումարին (այսուհետ՝ Համագումար):

7.2. Համագումարը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Համագումարը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը: Եթե Կազմակերպության անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով Համագումարին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

Կազմակերպության արտահերթ Համագումար հրավիրվում է Կազմակերպության անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի պատճառաբանված պահանջով՝ Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում:

7.3. Համագումարի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և փոփոխությունը,

բ) Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը,

գ) Կազմակերպության լուծարման և վերակազմակերպման մասին որոշումների ընդունումը,

դ) Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

7.4. Համագումարը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության բոլոր պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են բոլոր պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

7.5. Կազմակերպությունը կարող է ունենալ փոխնախագահ, որն ընտրվում է Կազմակերպության Համագումարի կողմից՝ երկու տարի ժամկետով և փոխարինում է Կազմակերպության նախագահին նրա բացակայության ժամանակ:

7.6. Կազմակերպությունը կարող է ունենալ գործադիր տնօրեն և քարտուղար: Գործադիր տնօրենը և քարտուղարը նշանակվում և ազատվում են Կազմակերպության նախագահի կողմից և հաշվետու են նրան:

Գործադիր տնօրենն ապահովում է Կազմակերպության ընթացիկ աշխատանքները:

Կազմակերպության քարտուղարը՝

ա) կազմակերպում է Կազմակերպության գործավարությունը,

բ) արձանագրում Կազմակերպության Խորհրդի նիստերը,

գ) տնօրինում է Կազմակերպության արխիվը,

դ) Կազմակերպության անդամներից գանձում է մուտքավճար և անդամավճար:

7.7. Խորհուրդն ընդունվում է Համագումարի կողմից երկու տարի ժամկետով:

Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Կազմակերպության նախագահի կողմից ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20 %-ի, Խորհրդի անդամների մեկ երրորդի կամ Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովի պահանջով:

7.8. Խորհուրդը՝

ա) հաստատում է Կազմակերպության նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Համագումարին ներկայացվող հաշվետվությունը,

բ) առաջարկություններ է ներկայացնում Համագումարին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,

զ) ընդունում է Կազմակերպության անդամ և ազատում կամ զրկում անդամությունից,

դ) Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ,

ե) ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում,

զ) սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը,

է) ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը,

ը) ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, կառուցվածքային ստորաբաժանումները, առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները,

թ) հաստատում է Կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը,

ժ) սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը,

ժա) հաստատում է Կազմակերպության հաշվապահական հաշվառման հաշվետվությունները,

ժբ) իրավունք ունի քննարկել և լուծել Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Համագումարի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

7.9. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների առնվազն կեսը:

Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:

7.10. Կազմակերպության նախագահն ընտրվում է Համագումարի կողմից 2 տարի ժամանակով: Կազմակերպության նախագահի թեկնածուների առաջադրման, գրանցման, ընտրության, ինչպես նաև քվեաթերթիկներ կազմելու կարգը սահմանում է Խորհուրդը:

7.11. Կազմակերպության նախագահը՝

- ղեկավարում է Խորհրդի աշխատանքները և վարում նրա նիստերը,
- ներկայացնում է Կազմակերպությունն առանց լիազորագրի,
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր,

- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ,
- Խորհրդի հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի հաստիքացուցակը,
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Կազմակերպության` մինչև մեկ միլիոն դրամ արժողության գույքը:

- 7.12. Կազմակերպության փոխնախագահը ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով և փոխարինում է Կազմակերպության նախագահին վերջինիս բացակայության ժամանակ,
- 7.13. Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը ընտրվում է Համագումարի կողմից 2 տարի ժամանակով: Խորհրդի անդամները և Կազմակերպության նախագահը չեն կարող լինել Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:
- 7.14. Վերահսկիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Կազմակերպության անդամների 20 %-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի, Կազմակերպության նախագահի կամ Խորհրդի պահանջով:
- 7.15. Կազմակերպության վերահսկիչ հանձնաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Վերահսկիչ հանձնաժողովը կարող է Կազմակերպության նախագահից և այլ աշխատողներից պահանջել Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:
- 7.16. Վերահսկիչ հանձնաժողովը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Համագումարին` Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 8.1. Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:
- 8.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ,

արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

- 8.3. Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝
- Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
 - բանկային հիմնարկներից ստացված վարկերը,
 - դրամաշնորհները,
 - բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրվածությունները,
 - Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
 - Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:
- 8.4. Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
- 8.5. Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:
- 8.6. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- 9.1. Կազմակերպությունը կարող է լուծարվել Համագումարի կամ դատարանի որոշմամբ:
- Համագումարը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:
- Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Համագումարի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:
- 9.2. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Համագումարի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ: